




Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

«Գործք Առաքելոց»-ի 2 և Է գլուխները մեզ պատմում են եկեղեցու առաջին սրբի կյանքի, քարոզության ու մարտիրոսության մասին: Դա ս. Ստեփանոս նախավկա սարկավագն է, որը քարկոծվեց ու նահատակվեց վասն Քրիստոսի, ճշմարտության և արդարության:

Առաջին դարում, մեր Տիրոջ Համբարձումից հետո, երբ Երուսաղեմում կազմակերպվեց առաջին քրիստոնեական եկեղեցին, հավատացյալների թիվը բազմապատկվեց. առաքյալները չէին կարողանում և՛ քարոզությանը զբաղվել, և՛ աղքատներին, և՛ հիվանդներին, և՛ որբեայրիներին նպաստ մատակարարել ու այցելություն տալ, ուստի առաքելական ժողովը որոշեց յոթ մարդիկ բնտրել, և որոնք օրհնվեցին այդ սպասարկության համար և կոչվեցին սարկավագներ (հունարեն **սարկավագ** բառը նշանակում է սպասավոր):

Սարկավագները միայն սեղանի սպասարկության գործով չէին զբաղվում. պատեն առիթներին նաև քարոզում էին և նույնիսկ մկրտում:

Յոթ սարկավագների մեջ իր սրբությանը հատկապես աչքի էր ընկնում Ստեփանոսը, որ «շնորհներով և զորությամբ լցված մարդ, ժողովրդի մեջ զարմանալի գործեր և մեծամեծ նշաններ էր գործում» (Գործք. 2 8):

«Գործք Առաքելոց»-ի հիշյալ գլուխները նկարագրում են ս. Ստեփանոսի քաջ ու համարձակ, հերոսական կերպարը: Նա, լցված

Քրիստոսի սիրով, մարտիրոսության լուսավոր պսակի արժանացավ: Ս. Ստեփանոսը տարվում է հրեական առյան ու մահվան դատապարտվում:

Նա այնքան միաձուլ է զգում իրեն իր պաշտած Հիսուսին, որ Նրա ոգով խնդրում է իր հակառակորդներին ներել. «Տե՛ր, սա մեղք մի համարիր նրանց» (Գործք. Է 59):

Ս. Ստեփանոսի ներողամտության ոգին բուն իսկ քրիստոնեական ոգին է: Նրա օրինակին, կյանքին և վարքին հետևել են հետագա դարերի բոլոր սրբերն ու մարտիրոսները:

Ս. Ստեփանոսը կենդանի ուսման է հանդիսացել նաև եկեղեցիներում սարկավագների ու հատկապես դպրեվանքի ուսանողների համար:

Ս. Ստեփանոսի տոնին վանքերում և եկեղեցիներում անպայման կատարվում են սարկավագների ձեռնադրություն, մեծ հանդիսավորությամբ ու ս. պատարագի մատուցմամբ:

Մայր Աթոռում այս տարի ևս ավանդական հանդիսավորությամբ նշվում է ս. Ստեփանոսի տոնը: Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռի սարկավագների և ճեմարանի ուսանողության տոնն է:

Գեկտեմբերի 23-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը դպրության չորս աստիճաններ է շնորհում հոգևոր ճեմարանի 12 ուսանողների. Ստեփանոս Չարսյան,

Հովսեփ Մովսիսյան, Կարեն Փանոսյան, Ստեփան Կարապետյան, Նշան Քիրեմիջյան, Պետրոս Ասողյան, Հակոբ Սազոյան, Թորոս Մելենկիչյան, Վաչե Պողոսյան, Մեսրոպ Խաչիկյան, Արա Դաքեայան և Տիգրան Շուֆայան, իսկ առաջին երկուսին՝ Ստեփանոս Չաքալյանին և Հովսեփ Մովսիսյանին՝ նաև կիսասարկավագության աստիճան:

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Մայր տաճարում կատարվում է ժամերգություն՝ օրվա սրբին նվիրված, և կատարվում են գեղահնչուն «Նահատակ բարի Բրիստոսի», «Այսօր դասք», և «Ընդ երկնայնոց» շարականները:

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ է, որ խորհրդավոր ու գեղեցիկ մի պահ է շնորհվում ևս հավատացյալ ժողովրդին:

Ավանդատինց զույգ-զույգ, աղավարտները գլխներին, գալիս են Մայր Աթոռի սարկավագները՝ ձեռքերին բուրվառներ և խնկամաններ: Նրանք, ավագության հաջորդականությամբ, շարվում են ս. Ստեփանոսի խորանի առջև ու մնում այդպես մինչև առավոտյան եկեղեցական արարողության ավարտը:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագը:

Ս. Ստեփանոսի խորանում տարին մեկ անգամ է կատարվում ս. պատարագ, այն էլ միայն ս. Ստեփանոսի տոնի օրը: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը:

«Ճաշու գիրք»-ը կարդալուց առաջ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպ. Սանթրոսյանը կատարում է սարկավագների ձեռնադրությունը: Ձեռնադրվում են հոգևոր ճեմարանի անգլերեն լեզվի դասախոս Ստեփանոս Չաքալյանը և Ա. լսարանի ուսանող Հովսեփ Մովսիսյանը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը:

Ձեռնադրության ավարտից հետո ինչպես նորոգման, այնպես էլ հին սարկավագներին ուղղված հայրական-խրատական խոսք է ասում ձեռնադրող սրբազան հայրը: Նա մաղթում է, որ սարկավագները լինեն հավատարիմ և նվիրված զավակները Հայաստանայց եկեղեցու: Նվիրված ու հավատավոր հոգևորականների կարիքը միշտ էլ զգացվում է ամենուրեք, և՛ Մայր Աթոռում, և՛ ներքին թեմերում, և՛ ափսուրքում: Նման հանգամանքն ուրախություն կալածադրող նաև Վեհապառ Հայրապետին: Սրբազան հայրը բարեմաղթում է, որ ս. Ստեփանոսի նման Մայր Աթոռի սարկավագներն էլ լինեն «մշակք առանց ամօթոյ»:

Ժամը 14.30-ին մայրավանքի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների:

Ճաշկերույթին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսությունը և ուսանողությունը:

Սարկավագներին ուղղված, ի դեմս դասախոսական կազմի, շնորհավորական խոսք է ասում Պարզև Ծախբազյանը:

Պատասխան շնորհակալական խոսք է ասում նորոգման Ստեփանոս Չաքալյանը՝ ուղղված Հայոց Հայրապետին, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ձեռնադրիչ սրբազանին՝ այդօրվա շնորհաբաշխության համար, և խոստանում, հանուն իր սարկավագ եղբայրների, լինել ծառայատեր, խոնարհ, եկեղեցատեր, ուսումնասեր, բարի օրինակ հանդիսանալ կրտսերներին ու հնազանդ՝ երեցներին:

Դեկտեմբերի 27-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, սարկավագներին հայրական սիրով ընդունեց Վեհապառ Հայրապետը: Նորին Սրբությունը մասնավոր գործով շնորհավորում է սարկավագների տոնը, մաղթում նրանց լինել նվիրյալ սպասավորներ Աստուծո ս. Մեղանի և ուխտապահ զավակներ Մայր Աթոռի:

Այդ ուրախ առիթով Վեհապառ Հայրապետը սարկավագներին, նրանց տոնի առիթով, նվիրում է «Վագգեն Ա. Հայրապետ Հայոց, գիրք երրորդ»-ը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ի խորոց սրտի շնորհավորում է նորոգման սարկավագներին, գնահատում նրանց կամավոր նվիրումի և զոհողության ոգին ու մաղթում նրանց լուսավոր ու բեղուն կյանքի և ծառայության ուղի՝ ի պայծառություն Հայաստանայց ս. եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

* *

Ստեփանոս սարկավագ Չաքալյան.— Ծնվել է 1946 թվականին Հունաստանի Նիկիա-Բիրես քաղաքում: Սովորել է տեղի Գալիական վարժարանում և այն ավարտել 1960 թ.: Նույն թվականից ուսումը շարունակում է Կիպրոսի Մեթոնյան կրթական Հաստատությունում:

1967 թվականին ընդունվում է Բեյրութի Ամերիկյան համալսարանի մաթեմատիկայի և փիլիսոփայության ֆակուլտետ, որն ավարտում է 1970 թ.՝ ստանալով արվեստից պատկավորի տիտղոս: Ապա հետևում է մագիստրոսի վկայական ստանալու դասընթացներին: Սույն դասընթացն ավարտել է 1972-ին: Նույն համալսարանում հետևել

է նաև կրոնների պատմության դասընթացներին: Մեկ տարի էլ փիլիսոփայության դասեր է ավանդել համալսարանում:

1977 թ. մայիս ամսից ուխտավորաբար այցելում է Մայր Աթոռ և, իր հոգևոր հակումներին հարազատ մթնոլորտ գտնելով, դիմում վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռի միաբան դառնալու: Այժմ Ստեփանոս սարկավազն անգլերեն է դասավանդում անմարանի դասարանական բաժնում:

Հովսեփ սարկավազ Մովսիսյան.—Ծնվել է 1956-ին Լոս Անջելոսում: Սովորել է տեղի անգլիական դպրոցում և, այն ավարտելուց

հետո, 1972-ին, ընդունվել է Կալիֆորնիայի համալսարան՝ հոգեբանության և կրոնի դասընթացներին հետևելու համար: 1977-ին ավարտել է հիշյալ համալսարանն ու նույն բավկանի հոկտեմբեր ամսից ուխտավորաբար եկել է Մայր Աթոռ՝ հոգևորական դառնալու հաստատ որոշումով:

Հովսեփ սարկավազը հոգևոր անմարանում հետևում է հայ եկեղեցու պատմության, մատենագրության և հայագիտության ճիշար առարկաների:

ԱՆԱՍՏԱՍ ՍԱՐԿԱՎԱԶ ՄՈՎՍԻՍՅԱՆ

